

Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ԿԻՒ ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի
ՆՈՐ ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ» ՀՈԴՎԱԾԻ ԱՌԹՎ

ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄՅԱՆ
ՀՄՍՀ ԳԱ ակադեմիկոս

Յուրաքանչյուր քննադատության հիմքում պետք է ընկած լինի անաչառության սկզբունքը, ձգտումը պարզելու հարցերը և օգնելու տվյալ բնագավառի գիտության խնդիրների ճիշտ լուսաբանմանը: Բայց երբ քննադատը ղեկավարվում է սոսկ մի սկզբունքով՝ որքան հնարավոր է հարվածել քննադատվող հեղինակին և թյուրիմացության մեջ գցել ընթերցողին, ապա այդ դեպքում հարցը, բնականաբար, ստանում է այլ բնույթ՝ շունենալով ոչ մի աղերս գիտական անաչառության հետ:

Զենք թաքցնում Գ. Պետրոսյանի նման հեղինակներին պատասխանելու «ժվարությունը»։ շարադրանքի տրամաբանական կապակցության բացակայություն, փաստերի խճճում և դրանց ներկայացման օրգանական կապի ու բարեխղճության պակաս, անհարիր և իրարամերձ հետևություններ՝ հիմնված անատաղձ ու իմպերատիվ հայտարարությունների վրա, — սրանք, իրոք, դժվարություններ են, որոնք ստիպում են պատասխանողին նախ պարզել (համադրելով) հեղինակի ասածը, գլուխ հանել պարզ երևույթների և իրողությունների մասին ստեղծված խճճանքից և ապա նոր՝ գրել պատասխանը:

Արժարժվող հարցերի մասին խոսողը առաջին հերթին պիտի լինի քարտեզագետ և Կղավդիոս Պողոմեոսի «Աշխարհագրության» բնագրային լեզվով տեքստի ու նրան կցված քարտեզների մասնագետ: Գրեթե կես դար զբաղվել և՛ հին աշխարհի քարտեզներով և հիմնականում Պողոմեոսի վերականգնված քարտեզներով, քարտեզագրել եմ Հերոդոտի, Քսենոֆոնի, Ստրաբոնի, Պլինիոսի, Պողոմեոսի և անտիկ այլ հեղինակները ու սրանց կողքին՝ հայ և վրաց մատենագիրների տեքստերը: Այդ քարտեզները հիմնականում վերաբերում են Հայաստանին, Անդրկովկասին, Հյուսիսային Կովկասին, Իրանին, Փոքր Ասիային և Միջին Ասիային: Սրանց մեծ մասը հրատարակված է: Աշխատանքի ընթացքում շարունակ քննադատորեն եմ մոտեցել իմ եզրահանգումներին, որոնք ժամանակի ընթացքում երբեմն փոփոխվել են: Օրինակ, այժմ ինձ համար կասկածից վեր է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ղեկավարվել է Պողոմեոսի տեքստով և նրա քարտեզներով: Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ի տեքստը առաջին հերթին վերարտադրում է Պողոմեոսի՝ աշխարհի վերականգնված քարտեզը այն աստիճան, որ այսօրվա դիտողը «Աշխարհացոյց»-ի տեքստի հիման վրա կազմված աշխարհի քարտեզը համարում է պարզապես Պողոմեոսի քարտեզ: Գծագրության մանրությունները այնքան միատեսակ են, որ «Աշխարհացոյց»-ի տեքստի աղավաղված մասերը և տարընթերցվածները հեշտությամբ պարզվում են ու վերականգնվում Պողոմեոսի տեքստի ու քարտեզների օգնությամբ: Համոզված եմ, որ եթե իմ քննադատը ժանոթ լիներ անտիկ ժամանակաշրջանի և վաղ միջնադարի քարտեզագրությանը, նա իր հոգվածում բոլորովին այլ մոտեցում կցուցաբերեր, սակայն նրան այդ հարցը չէ, որ հետաքրքրում է: Ընկ. Գ. Պետրոսյանի սուբյեկտիվիզմը և անձնականությունը իմ հանդեպ նրան մոռացնել են տալիս քննադատության ընդունելի նորմերը, և նա, մեղմ ասած, նույնիսկ կանգ չի առնում փաստերը յուրովի վերաձևելու առաջ:

Մենք ստիպված ենք նշել այն իրողությունը, որ տարիներ առաջ ընկ. Գ. Պետրոսյանը այլ մոտեցում ուներ մեր գիտական վաստակի գնահատման խնդրում: Այսպես, 1979 թ. Ա. Գ. Աբրահամյանի հետ հրատարակած իրենց

աշխատության մեջ նրանք դրել են. «Հայաստանի տասնհինգ երկրամասերի աշխարհագրության թարգմանության համար օգտագործված է Ս. Տ. Երեմյանի «Հայաստանն ըստ Աշխարհացոյց»-ի խորագրով աշխատությունը»¹։ Մի այլ տեղ նշել են, որ «Մեծ Հայքի, Վերքի և Աղվանքի աշխարհագրությունների բաժիններում բազմաթիվ անուններ ճշտված են ՀՍՍՀ ԳԱ-ի ակադեմիկոս Ս. Երեմյանի կողմից, որից և մենք օգտվել ենք»²։ Նույն ոգով է իմ մասին նշված հրատարակության նաև այլ տեղերում։ Այսպես էր վիճակը պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի կենդանության ժամանակ, երբ իմ հանդեպ հեղինակի մոտ գոյություն ուներ բարյացակամ վերաբերմունք, չնայած առանձին հարցերում այն ժամանակ էլ նա ինձ հետ համաձայն չէր, բայց դրանք չէին հասցնում նրան սուբյեկտիվիզմի։

Այժմ հեղինակի տրամադրությունը փոխվել է, և նա ամեն կերպ ձգտում է թերություններ որոնել մոտ քառորդ դար առաջ գրված իմ աշխատության մեջ։ Օրինակ, նա քննադատում է սկզբնական շրջանում արտահայտած իմ այն միտքը, ըստ որի «Աշխարհացոյց»-ը դժվար թե հեղինակած լինի Անանիա Շիրակացին³։ Սակայն գիտական միտքը քարացած բան չէ. ժամանակի ընթացքում այն կարող է փոխվել, հանգել նոր եզրակացության, որը ժխտում է նախկին կարծիքը. փոխվել է նաև մեր կարծիքը խնդրո առարկա որոշ հարցերում։ «XIX դարում գիտության մեջ այն կարծիքն էր իշխում, — գրել ենք 1980 թ., — թե իբր VII դարի «Աշխարհացոյց»-ը Պողոմեոսի աշխարհագրական աշխատության համառոտ տարբերակն է։ Նաև այն ենթադրությունը կար, թե Պապոս Ալեքսանդրացու՝ Դիոկղետիանոսի (284—305) ժամանակակցի, «Երկրագրության» հայերեն շարադրանքն է։ Ներկայումս վստահորեն կարելի է ասել, որ այդ աշխատասիրությունը հայ գիտնական Անանիա Շիրակացու ինքնատիպ ստեղծագործությունն է»⁴։ Այժմ մեր աշխատություններում վստահորեն ասում ենք, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը (Անանիա Շիրակացին) իր ձեռքի տակ ունեցել է ոչ միայն Պապոս Ալեքսանդրացու «Երկրագրությունը», այլև Պողոմեոսի «Աշխարհագրության» ձեռնարկը», որը հանդիսացել է նրա հիմնական աղբյուրը։ Բնական էր, որ «Աշխարհի հին հայկական ատլասը» կազմող «Աշխարհի քարտեզը» և մյուս քարտեզները վերականգնելուց հետո «հարավոր է դառնում վերականգնել նաև հին հայկական գլոբուսը»⁵։ Նորից ճշտվում է Բ. Պատկանյանի եզրակացությունը, որ «Եթե Պողոմեոսի և մեր հեղինակի միջև մեծ մասամբ ոչ միայն նմանություն է գիտվում, այլև շատ հաճախ արտահայտությունների նույնություն, ապա դա միայն այն է ապացուցում, որ Պապոս Ալեքսանդրացու կորած տրակտատը ոչ թե ինքնուրույն աշխատություն է եղել, այլ Պողոմեոսի պարզ համառոտագրությունը»⁶։

Այս պնդումը շատ ճիշտ է. «Աշխարհացոյց»-ի տեքստում 23 անգամ հիշվում է Պողոմեոսը, իսկ Պապոս Ալեքսանդրացին՝ միայն 3 անգամ։ Սրանից հետո տարօրինակ է հնչում քննադատի պնդումը, որ իբր թե «Աշխարհացոյց»-ի հեղինակի վկայությունից չի բխում, որ նա ձեռքի տակ ունեցել է Պողոմեոսի աշխատությունը»⁷։ Այս անհիմն պնդումը նրան առիթ է տալիս ասելու, որ ես իբր փորձում եմ այդ «միանգամայն սխալ մտահղացումը վերագրել VII դարի

¹ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 359։

² Նույն տեղում, էջ 335։

³ Գրաբեգին Պետրոսյան, VII դարի հայկական «Աշխարհացոյց»-ի նոր լուսարանություն մի փորձի մասին (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 1986, № 6, էջ 59)։

⁴ Ս. Т. Еремян, География и картография (в кн. «Культура раннефеодальной Армении (IV—VII вв.)», Ереван, 1980, с. 232).

⁵ Նույն տեղում, էջ 335։

⁶ К. П. Патканов, Армянская география VII в., СПб., 1877, с. IV.

⁷ Գ. Պետրոսյան, նշվ. հոդվ., էջ 61։

հայ իրականութեանը⁸։ Մի հարվածով հարցը համարելով լուծված՝ Գ. Պետրոսյանը հայտարարում է. «Ո՞ւմ պետք է հավատալ, Շիրակացո՞ւն, թե՞ Սուրեն Երեմյանին ու Ֆիշերին»⁹։

Գույները խտացնելու համար նա այնուհետև այլ միջոց չի գտնում, քան օգնութեան կանչել իմ նախկին ասպիրանտ Թագ. Հակոբյանին, օգտագործելով նրա գրախոսականում գրքիս տված անհիմն ու միտումնավոր գնահատականը¹⁰, որի վկայակոչումը սոսկ մի բան է ապացուցում՝ Գ. Պետրոսյանի կողմնակալ մոտեցումը։

Հեղինակը փորձում է «պաշտպանել» Բ. Պատկանյանին և Հ. Մանանդյանին ընդդեմ Ա. Սուրբյանի, Յ. Ֆիշերի և իմ տեսակետների։ Նրա քննադատութիւնից ակնբախ է դառնում, որ հոգւածագիրը ծանոթ չէ ոչ միայն Ա. Սուրբյանի «Աշխարհացոյց»-ի ֆրանսերեն առաջաբանին և ծանոթագրութիւններին, այլև Յ. Ֆիշերի գերմաներեն աշխատանքին։ Այդ է պատճառը, որ, նա կարծում է, թե ես իբրև Ա. Սուրբյանի ենթագրութեան համաձայն՝ եմ վկայում, որ Յ. Ֆիշերը ապացուցել է, թե «Աշխարհացոյց»-ի հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է Պտղոմեոսի ոչ միայն բնագիրը, այլև նրա կազմած քարտեզները»¹¹։ Ա. Սուրբյանի աշխատութիւնը լույս է տեսել 1881 թ., իսկ Յ. Ֆիշերինը՝ 1919 թ., ուրեմն Ա. Սուրբյանին անծանոթ Յ. Ֆիշերով մենք չէինք կարող նրման հետևութեան հանգել։

Գ. Պետրոսյանը առհասարակ լսել անգամ չի ուզում քարտեզների գոյութեան մասին, սակայն, մոռանալով իր այդ մոտեցումը, նա գրում է, որ «Պապոս Ալեքսանդրացին Պտղոմեոսի տեքստի կամ քարտեզի հիման վրա համառոտաբար կազմել է Երկրի նկարագրութիւնը» և անում այն «տրամաբանական» եզրակացութիւնը, թե «հայ հեղինակը ոչ մի խոսք չի ասում քարտեզ կազմելու մասին»¹²։ Գ. Պետրոսյանի համար այս խնդրում բոլորովին արժեքից զուրկ է նաև Շիրակացու վկայութիւնը. «Այժմ ցանկանում եմ նրանց մասին մանրամասն խոսել, քանի որ փոքր-ինչ աշխատել եմ գրի և ֆաբլեզի վրա»¹³ (ընդգծումը—Ս. Ե.)։ Այս նախադասութիւնից Գ. Պետրոսյանը անում է այն անհարկ եզրակացութիւնը, թե «Աշխարհացոյց»-ը շարադրելիս Շիրակացին նոր քարտեզ չի կազմում»¹⁴։ Այստեղ, իրոք, տեղին է հարց տալ, թե ո՞ւմ հավատալ. «քարտեզի վրա» (այսինքն՝ քարտեզը կազմելու վրա) աշխատած Շիրակացո՞ւն, թե՞ Գ. Պետրոսյանին։

Գ. Պետրոսյանը գտնում է, որ Շիրակացին իր ձեռքի տակ է ունեցել միայն Պապոս Ալեքսանդրացու գործը, բայց ոչ երբեք Պտղոմեոսի աշխատութիւնը։ Այս պարագայում էլ Պետրոսյանը, հավանաբար, չի ցանկացել վստահել Շիրակացու հետևյալ խոսքերին. «Եվ ահա, քանի որ մենք ամփոփեցինք (աշխարհագրութեան) ընդհանուր մասը, այժմ սկսենք խոսել առանձին երկրների մասին ըստ Պապոս Ալեքսանդրացու»¹⁵։ Գ. Պետրոսյանը չի խորացել այն խնդրում, որ ընդհանուր մասի աշխարհագրութեան համար, համեմատյալ դեպք, Շիրակացին Պապոս Ալեքսանդրացուց չի օգտվել ե. որ այդ մասին հետո է միայն, որ նա առանձին երկրների խնդրում դիմել է վերջինիս աշխատութեանը։ Կասկած չի կարող, որ ընդհանուր մասի («Հասարակախօսութիւն») համար Շիրակացուն հիմք է ծառայել Պտղոմեոսի երկրը։

⁸ Նույն տեղում։

⁹ Նույն տեղում։

¹⁰ Երեանի համալսարանի «Գիտական տեղեկագիր», հ. 96, պր. 48, Երեան, 1965, էջ 85—86։

¹¹ Գ. Պետրոսյան, նշվ. հոգւած, էջ 60։

¹² Նույն տեղում, էջ 62։

¹³ Ա. Շիրակացի, Մատենագրութիւն, էջ 291։

¹⁴ Գ. Պետրոսյան, նշվ. հոգւած, էջ 63։

¹⁵ Ա. Շիրակացի, Մատենագրութիւն, էջ 262։

Պտղոմեոսից Շիրակացու օգտվելը ապացուցվում է նաև «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում պահպանված երկարության չափագիտական աղյուսակների տվյալներով: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության աղյուսակում հաղորդվում է. «...Եւ շափն է մասն. և մասն ասի հինգ հարիւր ասպարէզ»¹⁶: «Ասում են» արտահայտությունը վերաբերում է Մարինոսին (որից օգտվել է Պտղոմեոսը), Պտղոմեոսին (որից օգտվել է Պապոսը). հայտնի է, որ երեքն էլ մեկ աստիճանի երկարությունը ընդունել են 500 ստադիոն: Իսկ սա խիստ կարևոր է, քանի որ կիրառական նշանակություն ունի՝ ըստ «Աշխարհացոյց»-ի բովանդակած տվյալների քարտեզագրական հիմք (աշխարհագրական կոորդինատներով, որոնք համապատասխանում են Պտղոմեոսի տվյալներին) և գլոբուս կազմելիս:

Գ. Պետրոսյանի անհիմն հայտարարությունը, որ «Աշխարհացոյց»-ը քարտեզագրական բնույթ չունի, հերքվում է հենց այդ երկի «Հասարակասունթիւն» հատվածով, որտեղ շարադրված են ինչպես քարտեզ, այնպես էլ գլոբուս կազմելու եղանակները՝ ըստ Պտղոմեոսի մեթոդի: Անանիա Շիրակացին, իր ձեռքի տակ ունենալով Պապոսի աշխատությունը, այնուամենայնիվ, հետևում է Պտղոմեոսին: Այդ երևում է քարտեզագրական ուսումնասիրությունից, և բոլորովին չի ճշտվում գրախոսողի ձգտումը ապացուցելու, որ «հայ հեղինակը ոչ մի խոսք չի ասում քարտեզ կազմելու մասին»¹⁷: Մի փոքր հետո, սակայն, գրախոսողը հակասելով իրեն, ընդունում է, որ Շիրակացին որոշակի կերպով նշում է քարտեզների առկայությունը, որպիսիք նա օգտագործում է իբր թե միայն իր «Աշխարհացոյց»-ը շարադրելիս¹⁸: Ինքն իրեն ժխտող այս թեզը բերելիս նա, ինչպես միշտ, այս անգամ էլ բավարարվում է սոսկ այն հայտարարությամբ, թե անշելով այն քարտեզների առկայությունը, որոնք օգտագործել է իր «Աշխարհացոյց»-ը շարադրելիս՝ Շիրակացին նոր քարտեզ չի կազմում, այլ եղած առանձին երկրների քարտեզներից համապատասխան նյութ է քաղում իր աշխատության մեջ»¹⁹:

Հարց ենք տալիս Գ. Պետրոսյանին, թե այդ ինչի՞ հիման վրա է նա հայտարարում, որ Շիրակացին այդ քարտեզները օգտագործել է միայն իր աշխատությունը շարադրելիս, բայց ոչ երբեք քարտեզներ կազմելու համար:

Հոդվածագիրը վերացական ճիգեր է թափում «ապացուցելու», որ մենք փորձել ենք, գնալով «սխալ ճանապարհով», Հայաստանում վաղ ֆեոդալիզմի շրջանում քարտեզագրությունը դնել բարձր մակարդակի վրա: «Հայաստանում, — գրում է նա, — վաղ ֆեոդալիզմի շրջանում քարտեզագրությունը բարձր մակարդակի վրա դնելու նպատակով Ս. Երեմյանը գնում է սխալ ճանապարհով»²⁰: Հոդվածագիրը չի էլ մտահոգվել այն մասին, որ այդ մեղադրանքը առաջին հերթին ուղղվում է հենց նաև իր դեմ, որովհետև վերոբերյալ մեջբերումից մի քանի տող վերև նա ինքը փաստորեն ընդունում է այն իրողությունը, որի դեմ մի քանի տող ներքև սուր է ճոճել: Նույն էշում նա գրում է. «Այդ քարտեզների առկայությունը ապացույց է այն բանի, որ Արշակունիների ժամանակ քարտեզագրությանը որոշակի տեղ է տրվել»²¹: Սա մենք բերեցինք ցուցադրելու համար Գ. Պետրոսյանի «քննադատական» մեթոդը: Այժմ անցնենք հարցին՝ ըստ էության:

Մեր աշխատության ներածականում գրել ենք, որ «աստղագիտությունն ու քարտեզագրությունը մեծ ծաղկում ապրեցին աղեքսանդրյան դպրոցի ներկա-

16 Ս. Ս. Երեմյան, «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 213):

17 Գ. Պետրոսյան, նշվ. հոդվ., էջ 62:

18 Նույն տեղում, էջ 63:

19 Նույն տեղում:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում:

յացոցիչների գործերում, որոնք երկար ժամանակ ազգում էին գիտության այդ ճյուղերի զարգացման վրա՝ հին հայերի ու արաբների մոտ, և նրանց միջոցով այնուհետև անցան Արևմտյան Եվրոպայում²²։ Գ. Պետրոսյանը գտնում է, որ այդ միտքը ես բերել եմ քաղվածաբար Ա. Դիտմարից²³։ Եթե մենք համեմատենք այդ երկու հրատարակությունները (իմ աշխատության ներածականը և Ա. Դիտմարի առաջաբանը), կտեսնենք, որ այնտեղ նմանություն կա, բայց բերվածը քաղվածք չէ և նշված պարբերությունը իմ գրքում չի դրված չակերտների մեջ։ Ես, հենվելով Ա. Դիտմարի հոդվածի վրա, արաբների կողքին ավելացնում եմ նաև հայերին։ Կրկնում եմ, բերվածը քաղվածք չէ, այլ ի զարգացումն Ա. Դիտմարի մոտքի՝ ես ավելացրել եմ, հիշատակելով հայերին, և նորից պնդում եմ իմ ասածը, որ «Անտիկ հասարակարգի կործանումից հետո նրա ոլորտում ընկած երկրներից Հայաստանը միակ երկիրն էր, որտեղ շարունակում էին զարգանալ աշխարհագրությունն ու քարտեզագրությունը, սակայն արաբական արշավանքների հետևանքով առաջացած երկրի քաղաքական ու տնտեսական անկումը երկար ժամանակով ընդհատեց այդ գիտությունների հետագա զարգացումը մեր երկրում»²⁴։ Օբյեկտիվիզմին «նվիրյալ» Գ. Պետրոսյանին դուր չի գալիս, որ հետագայում արաբների հետ միասին և նրանցից էլ առաջ հայերը ևս կարող էին մասնակից լինել գիտության փոխանցման գործում Եվրոպայում։ Թող հայտնի լինի հոգվածագրին, որ կաթոլիկ միջնադարյան Արևմտյան Եվրոպայում «հայտնի երկրի սխտեմատիկ նկարագրությունները, որպես կանոն, իրենցից ներկայացնում են խղճով բանաբաղություններ, երբեմն Պտղոմեոսից, բայց ավելի հաճախ Պլինիոսից, որն ինքը վատ բանաբաղ էր»²⁵։

Անդրադառնալով մեր կազմած քարտեզներին, որտեղ հոգվածագիրը կրկին բացահայտում է իր անտեղյակությունը քարտեզագրությունից, նա պատասխանատու հայտարարություն է անում, որ իբր «Աշխարհացոյց»-ի հիման վրա լիակատար քարտեզ պատրաստելը անհնար է»²⁶։ Կասկածից էլ վեր է, որ «Աշխարհացոյց»-ն ինքը տալիս է քարտեզագրական բավարար հիմքեր։ Փարտեզի և գլոբուսի գոյության մասին բավարար գաղափար է տալիս «Հասարակախօսութիւն» հատվածը, որտեղ կան բոլոր այն հիմնական հատկանիշները, որոնք անհրաժեշտ են քարտեզ (գլոբուս) կազմելու համար. դրանք են քարտեզի կազմման եղանակները, մաթեմատիկական հիմքերը, երկրագնդի մեծությունը, գուգահեռականներն ու միջօրեականները, գծային այն երկարությունները, որոնք համապատասխանում են մեկ աստիճանին և այլն, և այլն։ Դրանք նշելով, Շիրակացին հղում է հենց Պտղոմեոսին. «Պտղոմեոս Կլավդիոսն ասպարեզական չափերով չափել է մարդկային բնակության երկարությունը՝ սկսելով Արևմուտքից, այսինքն՝ Անթանոթ օվկիանոսի՝ Իսպանիա երկրի հեռավոր ծայրամասից, և Արևելքում հասել անթանոթ երկրի՝ Սինեայի եզրը՝ ողջ տարածությունը բաժանելով 180°-ի։ Այսպես է վարվել նաև Երկրի լայնությունը չափելիս. սկսել է այրեցյալ գոտուց և հյուսիսում հասել Անթանոթ ծովը՝ (Անթանոթ) երկիրը (բաժանելով) 63°-ի։ Նույնպես չափել է այրեցյալ գոտուց դեպի հարավ մինչև Անթանոթ երկիրը՝ 17°, որով ամբողջ լայնությունը (ևս) լինում է 80°։ Այս տարածությունից դուրս, ինչպես նշում է Պտղոմեոսը, ոչ ոք չի տեսել, ծանոթ չէ այլ երկրամասերի հետ, այդ պատճառով էլ (դրանից դուրս եղած երկրամասերը) կոչվում են Անթանոթ երկիր և (Անթանոթ) օվկիանոս»²⁷։

22 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 9։

23 Д. Ж. О. Томсон, История древней географии, перев. с англ. Н. И. Скаткина, вступит. статья А. Б. Дитмара, М., 1953, с. 15.

24 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 9։

25 Д. Ж. О. Томсон, նշվ. աշխ., էջ 485։

26 Գ. Պետրոսյան, նշվ. հոդվ., էջ 64։

27 Ա. Շիրակացի, Մտենադրություն, էջ 260։

«Աշխարհացոյց»-ում քարտեզագրական բավարար հիմքերի առկայությունը վկայելուց բացի, բերված հատվածը ցույց է տալիս, որ Շիրակացին Պտղոմեոսի երկին ծանոթ է եղել անմիջականորեն: Դա ապացուցվում է նաև մեկ այլ տեղեկությամբ, որին հանդիպում ենք Ա. Գ. Աբրահամյանի հրատարակած բնագրում, որտեղ ասված է. «Յոռում ինքնագիր բոլորակին տիեզերագրութեանց առեալ Պապայ Աղեքսանդրացոյ համառատարար երկրագրութիւն, յորմէ մեր եւ այլ ծաղկաքաղ արարեալ գրեցաք զմեծամեծսն և զնշանաւորսն միայն»²⁸, «Այլ» բառը այստեղ նշանակում է ուրիշներ: Հետևաբար «յորմէ մեր եւ այլ ծաղկաքաղ արարեալ գրեցաք» հատվածը պիտի թարգմանել «որից (Պապոսից—Ս. Ե.) և ուրիշներից ծաղկաքաղ ենք արել գրում ենք»: Այդ ուրիշների մեջ էին, անշուշտ, նաև Պտղոմեոսն ու Կոստանդին Անտիոքացին, որոնց մասին հիշատակություններ կան «Աշխարհացոյց»-ում: Այս հաստատվում է Պտղոմեոսի աշխարհագրության և «Աշխարհացոյց»-ում մի շարք հատվածների բառացի նույնականությամբ և կրկնություններով: Այս վերջին հանգամանքը չի վրիպել հետազոտողների ուշադրությունից:

Ամփոփենք. պրոֆ. Գ. Պետրոսյանը, իր իսկ խոսքերով ասած, ընթացել է իրոք սխալ ճանապարհով: Նվ դրա պատճառը, կարծում ենք, ոչ միայն նրա նախապես ունեցած կողմնակալ մոտեցումն է, այլև գրաբարը չհաղթահարելը, VII դարի հայ պատմական իրականության հետ անծանոթ լինելը և քարտեզագրությունից անբավարար գիտելիքների պաշարը:

ПО ПОВОДУ СТАТЬИ Г. ПЕТРОСЯНА «ОБ ОДНОЙ ПОПЫТКЕ
НОВОГО ОСВЕЩЕНИЯ АРМЯНСКОГО «АШХАРАЦУЙЦ»-а VII в.»

СУРЕН ЕРЕМЯН,
академик АН АрмССР

Р е з ю м е .

В своей статье, вопреки нашему мнению, Г. Петросян пытается доказать, что Анания Ширакаци при создании своего труда не пользовался трудом Птолемея, а лишь имел под рукой труд Паппа Александрийского, и что на основании последнего нельзя составлять ни карт, ни глобуса. Однако это ошибочное утверждение Г. Петросяна является лишь результатом того, что автор не является специалистом по исторической географии и картографии и не в состоянии провести источниковедческий анализ древних источников, скрупулезное изучение которых доказывает обратное, а именно: Анания Ширакаци в своем исследовании основывался на географических и картографических трудах как Птолемея, так и его последователя Паппа Александрийского. Эти труды дали Анании Ширакаци возможность составить свое оригинальное сочинение и карты. На основании труда Анании Ширакаци становится возможным реконструировать древнеармянский атлас мира и глобус.

Խմբագրության կողմից.—Տպագրելով պրոֆ. Գ. Պետրոսյանի հոդվածը (№ 6) և ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանի սույն պատասխանը, խմբագրությունը այլևս նպատակահարմար չի գտնում անդրադառնալ վիճարկվող հարցերին:

²⁸ Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ-338: